

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԾԵՐԱԿՈՅՏԸ ԶՕՐԱՎԻԳ ՂԱՐԱԲԱՂԻ ՎԵՐԱՄԻԱՑՄԱՆ

● Վերապահութեամբ պէտք է դիմաւորել ամերիկեան Ծերակոյտին այս որոշումը, որ հայկական պահանջատիրութեան հետ կապ ունենալով հանդերձ, երեսան կը հանէ կարեւոր իրաւականութիւն մը մեզի համար: Այնքան ատեն որ մեր պահանջը, այս պարագային ուղղուած է խորհրդային իշխանութեանց, ամերիկեան Ծերակոյտը, ելլելով իր շահերէն, կը ձայնակցի մեզի, մինչդեռ երբ պահանջատիրական մեր ձգտումները կը բախին Թուրքիոյ, ա՛ն եւ ամերիկեան իշխանութեան վերին այլ մարմիններ դուռը ամբօրէն կը փակեն մեր առջեւ, ինչ որ է պարագան հայկական զանազան բանաձեւերուն, որոնք շուրջ 10 տարիէ ի վեր անընդհատ կը մերժուին Ծերակոյտին կողմէ: Եւ

Չորեքշաբթի, 27 Յուլիսին, ամերիկեան Ծերակոյտը վաւերացնելէ առաջ իր քննած մէկ օրինադիրը - որ կապ ունէր առեւտուրի, արդարութեան եւ պետական բաժանմունքներու յատկացումներուն - յաւելում մը կցեց, որ կապ ունի Ղարաբաղի հարցով «Հայ Ժողովուրդի իրաւական ձգտումներուն» հետ:

- Խորհրդային կառավարութիւնը պէտք է յարգէ արդար տենչերը հայ ժողովուրդին:

2 - Խորհրդային կառավարութիւնը պէտք է դադրեցնէ հայ ժողովուրդի հանդէպ մարդկային իրաւանց լուրջ օրինազանցութիւնները:

3 - Եթէ խորհրդային Միութիւնը շարունակէ իր ողբալի մեղքերը հայ ժողովուրդին հանդէպ, այդ անխուսափելիօրէն իր հետեւանմանքը պիտի ունենայ Միացեալ Նախանգներու եւ Խորհրդային Միութեան յարաբերութեանց վրայ:

Օրինադիրին վրայ յաւելում մը կատարելու պահանջը ներկայացուցած են ծերակուտական ՄըքՔէյն (հանրապետական - Արիզոնա), ծերակուտական Փէթ Ուիլսըն (Հ. - Բալթիկ Նիւ Յիւ) եւ ծերակուտական Ռապըրթ Տոլ (Հ. - Քանզաս): Յիշեալ ծերակուտականներուն միացած են ծերակուտականներ Ըրնեսթ Հոլինկզ (Դեմոկրատ - Սաութ Բարալոյնս), Ուորըն Ռատմըն Հ. - Նիւ Հեմշըր) եւ ծերակուտական Ճան Չէյֆի Հ. - Ռոտ Այլընս):

Օրինադիրին կցուած յաւելումը կ'ըսէ. «Ամերիկեան Ծերակոյտը կը դանձ, որ 1923ին սովետներու կողմէ սահմանային փոփոխութիւնը Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ կայացուած այնպիսի ժամանակ, երբ այդ շրջանին մէջ աւելի քան 100,000 հայեր կ'ապրէին»:

Ատրպէյճանի հայեր խնդրանք ներկայացուցած են սովետ կառավարութեան արտօնելու որ անջատուին եւ միանան Հայաստանին:

1988ի Մարտին, Սովետ Գերագոյն Խորհուրդը մերժեց Լեոնային Ղարաբաղի անջատումը եւ Հայաստանի միացումը:

Լեոնային Ղարաբաղի Խորհուրդը 1988 Յուլիս 12ին որոշեց անջատուիլ Ատրպէյճանէն եւ միանալ Հայաստանին:

1988 Յուլիս 18ին, Գերագոյն Սովետի նախագահութիւնը մերժեց սահմանային փոփոխութեանց առաջարկներուն ընթացք տալ:

Հայ ղեկավար եւ քաղաքական աշխատանքներու մէջ գործունեայ Պարոյր Հայրիկեան սովետ քաղաքացիութենէ զրկուած է «Սովետական Միութեան հեղինակութիւնը վարկաբեկած ըլլալուն» համար:

Սովետ բանակայիններ ուղարկուած են շրջան կարգը հաստատելու, սակայն, բռնի ուժի դիմելով խանդարած եւ արդիւրած են խաղաղ ցոյցերը:

Տասնեակներով հայեր սպաննուած եւ հարիւրաւորներ վիրաւորուած են վերջին դէպքերու ընթացքին:

Արդ, նկատի ունենալով վերոյիշեալ կէտերը, Ծերակոյտը կը դատէ (հոս նշումը կ'ըլլայ վերոգրեալ երեք կէտերուն)՝

Ամերիկեան Ծերակոյտի Յուլիս 27ի նիստին, ծերակուտական ՄըքՔէյն խօսելով իր եւ երկու պաշտօնակիցներ ծերակուտականներ Տոլի եւ Ուիլսընի անունով յայտարարած է նաեւ.

«Խորքին մէջ, ես յուսախար եմ տեսնելով սովետ կառավարութեան վերաբերումը հանդէպ Հայ Ժողովուրդին եւ նոյնքան յուսախար եմ աւերիկ. կառավարութեան եւ մեր մտմուրի ընթացքին, որ այդ ուղղութեամբ բողոք չեն բարձրացուցած:

Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ անցեալին կատարուած սահմանային փոփոխութեան հետեւանքով հազարաւոր հայեր մնացին Ատրպէյճանի մէջ: Ներկայիս հարիւր հազար հայեր կ'ապրին իսլամ պետութեան մը սահմաններուն մէջ: Անոնք անկասկածաբար չէ որ կ'ուզեն, այլ Հայաստանին միանալ: Մուկուա շարունակարար մերժած է այս անջատումը: Հայեր իրենց այս փափաքը արտայայտեցին, սեղմումներու մեղմացումին որպէս հետեւանք: Այդ արտայայտութիւնները եղան խաղաղ ցոյցերու, հաւաքներու, բողոքներու, գործադուլներու ճամբով:

«Սովետ կառավարութիւնը սակայն, իր բանակայիններու միջոցաւ, ներկայիս բռնութիւններու սկսած է, ձերբակալութիւններ կատարելով, սննդամթերքի սահմանափակումներով, ճնշում բանեցնելու որպէսզի հայեր այդ պահանջէն հրաժարին:

«Կասկած չունիմ որ սովետներ պիտի յաջողին իրենց որոշումի գործադրութեան մէջ: Նոյն վերաբերումը անցեալին ցոյց տուած էին լաթվիացիներու, վիթուանացիներու եւ էսթոնացիներու նկատմամբ: Միեւնոյն ժամանակ կը հաւատամ որ կորստաւոր պէտք է յարգէ իր յանձնառութիւնները մարդկային իրաւանց մարզէն ներս, եւ մեր այս յաւելումը օրինաւորին պարզապէս կոչ ուղղել է Սովետական Միութեան, որպէսզի յարգէ Հայ Ժողովուրդին արդար տենչերը եւ մարդկային իրաւանց մարզէն ներս դադրեցնէ իր սեղմումները»:

Ծերակուտական Տոլ իր խօսքի աւարտին յայտարարած է. «Հայ Ժողովուրդը շատ տառապած է: Անոնք միայն իրենց իրաւունքները կը պահանջեն: Մենք հանգիստ պիտի չըլլանք մինչեւ որ անոնց իրաւունքները չհաստատուին»:

«ՊԱՅԲԱՐ»

են թերթերն ու դպրոցները, միութիւնները, ակումբները, եկեղեցիները:

Պահել դիտանք մեր ունեցածը, որպէսզի վաղը շաւաղենք: Պահել դիտանք մահաւանդ՝ Այս յախտան ահազանդէն ետք: Պէյրութ, 2 Սեպտեմբեր 1988